Պրոլետարներ՝ բոլոր յերկրների, միացե՛ք։

371.74

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1981 Թ.

6780-126

Ա Ի 4302

ՊԻՈՆԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ

ՉՄԵՌԱՅԻՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏՈՆԸ

«ՊԻՈՆԵՐ ԿԱՆՉ»-Ի ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Ե ՀԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ
ՅԵՎ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏԻ ԿՈՂՄԻՑ

ՊԻՈՆ-ԼՈՆ ... ԴՊՐՈՑԱԿԱՆ-
...ՌԱՅԻՆ ՏՈՆԻ
...ԿԱՆՈՆԱ-
...ԻՆԸ

126
Պիոն-դպրոցական
չմրամպրա հրեգերոց
կոնդ.

ՆՈՒՄ
...-ԻՆ

ՆՊԱՏԱԿԸ

1. Տարածել դպրոցներում ու պիոներների մեջ առային ֆիզկուլտի արժեքավոր ձևերը, ամրացնել ...եխաների առողջությունը:

2. Բարձրացնել ու կատարելագործել ձմեռային սպորտի տեխնիկան:

ՏԵՂԸ ՅԵՎ ԺԱՄԱՆԱԿԸ

Տոնը կազմակերպվում է Կիրովականում 1937 թի փետրվարի 16, 17-ին և 18-ին: Մասնակցողները ...տք է լինեն Կիրովականում փետրվարի 15-ի դեկոյան:

ԿՈԼԵԿՏԻՎԻ ԿԱԶՄԸ

1. Տոնին կարող են մասնակցել այն դպրոցների կոլեկտիվները, որոնք շրջանային մրցակցություններում գրավել են առաջին տեղը—առանձին կարգերում: Հավաքական կոլեկտիվներ կազմակերպելն արգելվում է:

2. Մրցումները տեղի յեն ունենալու 2 կարգով առանձին—առանձին՝ 5, 6, 7 և 8, 9, 10 դասարանների:

3. 1-ին կարգի կազմը (5, 6, 7 դաս.)
   2 տղա,
   1 աղջիկ:

4. 2-րդ կարգի կազմը (8, 9, 10 դաս.)

2 տղա,

1 աղջիկ:

5. Յուրաքանչյուր շրջանից մասնակցում է 1-ին և 2-րդ կարգերից մեկական կոլեկտիվ, այսինքն մեկ կամ յերկու դպրոց, ընդամենը 6 հոգի և 1 դեկավար:

6. Յուրաքանչյուր շրջանի տրվում է ևս մեկ տեղ, բացի 6 հոգուց—մեկ տղա կամ աղջիկ, շրջանային մրցակցությունների ընթացքում այն լավագույն արդյունքներ ցույց տվողներից, վորոնք իրենց կոլեկտիվի թույլ լինելու պատճառով հնարավորություն չեն ունենա մտնել մեկնող դպրոցական կոլեկտիվի մեջ:

7. Թույլատրվում է մասնակցել նաև միայն մեկ կարգով (որ. 1-ին կամ 2-րդ): Բոլոր դեպքերում աղջիկների կազմի մեջ լինելը պարտադիր է:

8. Կոլեկտիվը կազմելիս առավելությունը պետք է տրվի ուսման հարվածայիններին: Ակադեմիապես թույլ աշակերտներին մրցակցություններին մասնակցել չի թույլատրվում:

ԾՐԱԳԻՐ

Դահուկավազք

1-ին կարգ

Տղաներ—3 կիլոմետր.

Աղջիկներ—2 կիլոմետր.

Եստաֆետ—3×2 կմ.

2-րդ կարգ

Տղաներ—5 կիլոմետր.

Աղջիկներ—3 կմ.

Եստաֆետ—3×2 կլմ.

Մրցումներին մասնակցողների մեջ անհատական առաջնության կարգով կանցկացվեն՝

Ցատկումներ տրամպլինից:

Սահումներ արգելքներով ըստ արագության (սլալոմ):

Սահումներ սահնակներով:

ՈՐԱՑՈՒՅՑ

1-ին որ

2, 3, 5 կիլոմետր:

2-րդ որ

Եստաֆետներ:

Ցատկումներ:

3-րդ որ

Սլալոմ:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Մրցումներին մասնակցող դպրոցականներն ազատվում են պարապմունքներից մրցումների ամբողջ տևողության ընթացքում և ճանապարհին գտնվելու ժամանակամիջոցին:

ՀԱԳՈՒՍՏ, ՆՇԱՆՆԵՐ, ՊԻՏՈՒՅՔՆԵՐ

1. Մրցումներին մասնակցող յուրաքանչյուր կոլեկտիվ պետք է ունենա միատեսակ սպորտիվ հագուստ և նշաններ:

2. Մրցումների պիտույքները (դահուկներ, յուղ, ամրակապեր, սահնակներ), մասնակցողները բերում են իրենց հետ:

3. Յուրաքանչյուր մասնակցող պետք է իր հետ բերի 1 յերեսսրբիչ, ոճառ, թեթև վերմակ:

ԲԺՇԿԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ

1. Բոլոր մասնակցողները տեղերում պետք է յենթարկված լինեն բժշկական քննության և ունենան բժշկից տեղեկանք հետևյալ ձևով՝

ՏԵՂԵԿԱՆՔ

. . . . . աշակերտին (թվել, վոր դպրոցից, ծննդյան թիվը և սեռը) թույլատրվում է մասնակցել 1937 թ. մանկական 5-րդ ամառային տոնին:

Բժշկի ստորագրությունը

(Պարզ նշելով նաև աշխատանքի վայրը)

Վերջին բժշկական ստուգումը պետք է կատարված լինի մեկնելուց մեկ որ առաջ:

ՀԱՅՏ

Մրցումներին մասնակցել ցանկացող յուրաքանչյուր շրջան պարտավոր է իր ցանկության մասին մինչև փետրվարի 8-ը հեռագրով հայտնել կազմկոմիտեյին (Յերևան, Լուսժողկոմատի ֆիզկուլտ-կոմիտեյի հասցեյով):

2. Կոլեկտիվը կարող է մեկնել կիրովական այն դեպքում միայն, յերբ տոնի կազմկոմիտեյից գրավոր թույլտվություն կստանա:

Ինքնակամ ժամանած կոլեկտիվներն անմիջապես յետ կուղարկվեն:

3. Կոլեկտիվը, բացի բժշկի տված տեղեկան-

ֆից, իր հետ պետք է բերի մասնակցողների ցուցակը հետևյալ ձևով:

ՎԿԱՅԱԿԱՆ

№	Անուն ազգանուն	Դպրոց	դասարան	սեռ	ծննդյան թիվ	պիոներ է թե վոչ	ծանոթություն

Սույն ցուցակում հիշված դպրոցականները գործուղվում են կիրովական, մասնակցելու պիոներական ու դպրոցական 5-րդ ամառային տոնին:

Ճանապարհածախսով և որապահիկով մինչև կիրովական բավարարված են:

Ներկայացուցիչ նշանակված է ընկ. . . . . (ազգանուն, անուն, պաշտոն):

Լուսաբաժնի վարիչ՝

ԼԿՑԵՄ շոֆկոմի քարտուղար՝

Ֆիզկուլտ խորհրդի քարտուղար՝

ԾԱԽՍՍՐ

1. Մրցումներին մասնակցելու իրավունք ունեցողների տեղում գիշերելը, սնունդը և վերադարձի ճանապարհածախսը և որապահիկը հոգում է կազմկոմիտեն:

2. Մինչև կիրովական գալու ճանապարհածախսը, որապահիկը, ապահովում են տեղերը (դպրոց, լուսաբաժին):

ԳՆԱՀԱՏՈՒՄ

Դպրոցների մեջ առաջնությունը վորոշելու յե յուրաքանչյուր կարգի համար առանձին, համաձայն տղաների և աղջիկների տեղերի գումարով:

Կոլեկտիվի տեղը վորոշվում է յերկու տղաների արդյունքի (ժամանակի) և աղջկա ցույց տված ժամանակով:

Նստաֆետում 3-ի ցույց տրված ժամանակով (ըստ վերջինի):

Սլալոմը գնահատվում է ցույց տրված ժամանակով, վորից դուրս է գալիս մեկական վայրկյան յուրաքանչյուր սխալի համար:

Ցատկումը վորոշվում է նրա յերկարությամբ:

Սահնակով սահումը—սահնակի որիգինալության և ձևավոր սահումի համար: Սահնակը կարող է լինել մի քանի տեղանի, ղեկով և այլն:

ՄՐՑԱՆԱԿՆԵՐ

1. ՀԽՍՀ ժողկոմխորհի—1000 ռուբլի:

Տրվում է այն դպրոցին, վորը յերկու կարգում էլ գրավել է լավագույն տեղերը:

2. Առանձին կարգերում առաջնակարգ տեղեր գրավող դպրոցներին ու կոլեկտիվներին:

3. Լենինգրադուկայինի յեռամրցման մեջ առաջին տեղ գրավողին (յերկար տարածություն, սլալոմ, ցատկում):

4. Առանձին տարածություններում, սլալոմում և ցատկումներում առաջին 4 տեղերը գրավողներին:

Կպարգևատրվեն մրցումներին մասնակցող դպրոցների 2 դիրեկտոր-վարիչ, 2 ֆիզկուլտ դասատու և

2 պիոներ աշխատող, վորոնք լավագույն կերպով նախապատրաստած կլինեն ամառային տոնը և ամառային սպորտ աշխատանքները կանոնավոր հիմքերի վրա դրած կլինեն դպրոցում:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ Ի ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ 5-ՐԴ ԶՄԵՌԱՅԻՆ ՏՈՆԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂՆԵՐԻՆ ՅԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Տոնի ընթացքում պետք է պահպանել վերին աստիճանի բարձր կարգապահություն:

2. Ղեկավար ընկերների բոլոր կարգադրությունները պետք է կատարվեն տրված ժամկետին, կարգադրության կամ հանձնարարված աշխատանքի կատարումից անմիջապես հետո այդ մասին տեղեկացնելով կարգադրություն անողին:

3. Մասնակցողներին բաշխվելիք համարները պետք է լինեն հագուստի վրա (և վոչ թե միայն մրցակցությունների ժամանակ):

4. Նույնը վերաբերվում է նաև սպորտիվ հագուստին:

5. Մասնակցողը պարտավոր է միշտ իր մոտ ունենալ Կազմ-կոմիտեյի կողմից տրված գկայականը:

Մրցակցություններին վերաբերող բողոքները, նկատողությունները և առաջարկները կատարվում են միայն ներկայացուցչի միջոցով: Մրցակցությունների ընթացքում մասնակցողները կամ ներկայացուցիչները վոչ մի դեպքում չպետք է վեճի բռնվեն դատավորների հետ: Բոլոր բողոքները և նկատողությունները գրավոր կերպով հանձնվում են գլխավոր դատավորին: Մանր, ընթացիկ խնդիրները լուծվում են տեղում դա-

տավորների կողմից:

Նրանց վորոշումները պարտադիր ու վերջնական են:

7. Սահմանված ռեժիմը պետք է կատարեն առանց վորևե խախտումների (քնել, հանգիստ, վեր կենալ): Ներկայացուցիչները պարտավոր են ամբողջ ժամանակ, թե՛ գիշեր, և թե՛ ցերեկ, լինել իրենց կոլեկտիվի հետ:

ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Ստարտում դասավորելու կարգը վերապահվում է դատավորին:

2. Ճանապարհով գնացողը պարտավոր է ընդունել կռվի և նանապարհ տալ առաջ անցնողին, յեթե առաջ անցնողն այդ պահանջի: Պահանջ չկատարող մասնակցողը, յեթե այդ հաստատվի, կզրկվի մրցակցություններին մասնակցելու իրավունքից:

3. Կատեգորիկ կերպով չի թույլատրվում վորևե միջոցով ոգնել մրցողին: Չի թույլատրվում փոխել դահուկները:

4. Պետք է անցնել նանապարհը ցույց տվող դրոշակների կամ դատավորների աջ կողմից, թողնելով նրանց իր ձախ կողմը:

5. Առաջին գնացողից կարելի յե անցնել միայն աջ կողմից, այսինքն նանապարհ տվողը ընդունում է դեպի ձախ: Յեթե առաջ անցնողը նանապարհ չի պահանջում, ինքն է պարտավոր ընդունել դեպի աջ:

6. Արգելվում է նանապարհի կիսին դուրս գալ մրցումից: Անհրաժեշտ է հասնել մինչև ֆինիշը, թեկուզ վերջինը: Բացառություններ կարող են լինել մի-

այն իրեն վատ զգալու դեպքում:

7. Ամբողջ նանապարհը պետք է անցնել անպայման դահուկներով: Դահուկները հանել չի թույլատրվում:

8. Ցատկումներ դահուկներով:

ա) Վերևից սահելու ժամանակ փայտերով ոգտվել չի թույլատրվում:

բ) Ամեն մեկն իրավունք ունի յերեք ցատկումի, հաշվվում է լավագույնը:

գ) Ցատկումը գնահատվում է նրա յերկարությամբ, հաշվելով տրամպլինի վերևի յեզրից ուղիղ գծով մինչև յետևի դահուկի վոտքի յետքի մեջտեղը:

դ) Յեթե ցատկումից հետո վայր ընկնելը կատարվում է 20 մետրի սահմաններում, ցատկումը չի հաշվվում:

9. Սլալոմ

ա) Սլալոմ—կոչվում է սահումներ թլուրներից, մոտ քառորդ կիլոմետր, ըստ ժամանակի (արագության) և անակնկալ դարձումներով:

Ճանապարհին դասավորված են դրոշակներ, վորոնք ցույց են տալիս նանապարհը: Դրոշակները դասավորված են այնպես, վոր ստիպում են դահուկավորին կտրուկ դարձումներ կատարել:

Դրոշակները պետք է թողնել դեպի ձախ, կամ անցնել 2 դրոշակի միջով:

Ճանապարհից շեղվելը կամ դրոշակ գցելը հաշվվում է սխալ և յուրաքանչյուր սխալի համար ցույց տրված ժամանակին ավելացվում է մեկ վայրկյան:

Փայտեր ոգտագործել թույլատրվում է:

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ԵՐԵՎԱՆ: ԴԻԱՎԼԻՏԻ ԼԻԱԶՈՐ Բ—2406

Ա 4302
ՀԱՍՍ ԳՐՏ
ԿԵՆՏՐՈՆԱԿ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0039181

[024]
59
A I/4302
проф.